

4017



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«07» 04 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 094 - 25

Նախաձեռնող՝

«Միդիա Քեսթրաքշն» ՍՊԸ
Քաղաք Երևան, Նոր Նորք, Գայի պ., շ. 41, բն. 20

Գործունեությունը՝

Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի 2-րդ թաղամաս 10
հասցեում բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցում
Կոպայքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ԲՓ N° 094 - 25

« 07 » ապրիլ 2025թ.

**Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի 2-րդ թաղամաս 10 հասցեում
բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցում**

Նախաձեռնող՝ «Միդիս Քնսթրաքշն» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն,
նախագծային փաստաթուղթ

Գործունեության կատեգորիա՝ «Բ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք,
Ձորաղբյուր բնակավայր

Ներածական մաս. Համաձայն ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության /այսուհետ՝ ՇՄԱԳ/ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի 2-րդ թաղամաս 10 հասցեում նախատեսվում է բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցում:


Կառուցապատման նախագծման համար հիմք է հանդիսացել Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից տրամադրված 2024թ. նոյեմբերի 15-ի N ՆԹ-1582-24 ճարտարապետահատակագծային առաջադրանքը: Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.5518 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի 2-րդ թաղամաս 10 հասցեում:

Հողատարածքի հարևանությամբ գտնվում են ազատ տնամերձ հողատարածքներ: Պահպանված են նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջները՝ հողամասի հեռավորությունը համայնքային ճանապարհից՝ 15 մ, մոտակա շենք-շինություններից կազմում է 66-182 մ, ջերմոցից՝ 86 մ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է մարզկենտրոն՝ Հրազդանից 46 կմ հարավ-արևմուտք, Երևանից՝ 15 կմ հեռավորության



վրա: Տարածաշրջանը բնորոշող ռելիեֆային հիմնական տարրերն են՝ Կոտայքի հրաբխային սարավանդի լանջերը:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ կամ պատմամշակութային հուշարձանների տարածքներ առկա չեն, ինչպես նաև տարածքում առկա չեն ծառատեսակներ: Համաձայն ինժեներաերկրաբանական ուսումնասիրության՝ հայցվող տարածքում բուսահողը բացակայում է:

Հողամասի ռելիեֆը հարթ է, կառուցապատված չէ, երկրաբանական տեսակետից բարենպաստ է կառուցապատման համար:

Նախատեսվող գործունեության տարածքում չկան էնդեմիկ կամ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ, բացակայում են նաև միգրացիոն ուղիները՝ տարածքի բնակեցված լինելու պատճառով: Տարածքը զուրկ է բուսականությունից՝ բացառությամբ տեղ-տեղ աճող ոչ արժեքավոր բուսականությունից:

Դիտարկվող շրջանը գտնվում է չոր մերձարևադարձային կլիմայական գոտում: Ուսումնասիրվող շրջանի կլիման արտահայտված ցամաքային է՝ շատ շոգ, չոր ամառ, չափավոր ցուրտ, անհողմ ձնառատ ձմեռ: Եղվարդի սարահարթի կլիման հիմնականում ձևավորվում է միջին լայնությունների օդային զանգվածների ազդեցության ներքո:

Ջերմաստիճանի բացարձակ նվազագույնը – 32.6°C, է բացարձակ մաքսիմումը հասնում է +38.7°C, տարեկան տեղումների քանակը՝ 445 մմ, օդի հարաբերական միջին տարեկան խոնավությունը՝ 61%:

Նախագծով ներկայացված կառույցը բաղկացած է լինելու բազմաբնակարան երկու շենքերից՝ մասնաշենք Ա և Բ, որոնք իրականացվելու են ժամանակակից ծավալատարածական և ճարտարապետական լուծումներով՝ նեոմոդեռն ոճի, համեմատաբար հանգիստ ձևավորմամբ:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 2042.3 մ² (37.0%), որից
մասնաշենք Ա՝ 1193.9 մ²,
մասնաշենք Բ՝ 848.4 մ²,
- կանաչապատման մակերեսը՝ 2260.0 մ² (40.9%),
- սալահատակներ և ճանապարհներ՝ մոտ 1245.7 մ² (22.6%),
- շինության վերգետնյա մակերեսը՝ 30.504.8 մ², որից
մասնաշենք Ա՝ 17.995.8 մ²,
մասնաշենք Բ՝ 12.509.0 մ²,
- շինության ստորգետնյա մասի մակերեսը՝ 4765.0 մ²,
- բնակարանների ընդհանուր քանակը՝ 325,
ավտոկայանատեղիի ընդհանուր քանակը՝ 144,
- ստորգետնյա՝ 108, վերգետնյա՝ 36:

Մասնաշենք Ա զբաղեցնում է 1193.9 մ² կառուցապատման մակերես և ունի մինչև 16 հարկ բարձրություն: Վերին հարկերը (12-ից 16-րդ) իրականացված են նահանջ լուծմամբ: Շենքն ունենալու 2 մուտք՝ մուտք 1-ն ունենալու է 91 բնակարան և 4 հասարակական տարածք առաջին հարկում, մուտք 2-ը՝ 105 բնակարան և 4 հասարակական տարածք առաջին հարկում:

Մասնաշենք Բ - զբաղեցնում է 848.4 մ² կառուցապատման մակերես և ունի մինչև 16 հարկ բարձրություն: Նախագծված է 1 մուտքով, վերջին 2 հարկերն իրականացված են նահանջ լուծմամբ: Նախատեսվում է 129 բնակարան և 1 ընդարձակ հասարակական տարածք առաջին հարկում:

Տանիքները շահագործվող են նախատեսված տեխնիկական սենյակներով և կանաչապատ տարածքներով՝ բնակիչների օգտագործման համար:



Բնակելի շենքերի աստիճանավանդակների դռները հակահրդեհային են և վեջիններս նախատեսված են բաց օդային գոտով:

Ստորգետնյա հարկում նախատեսված է ավտոկայանատեղի, որն ունի 4765.0 մ² մակերես, ինչը կազմում է հողամասի մակերեսի շուրջ 86.3%-ը: Ավտոկայանատեղիի մուտքը նախատեսված է Ազատության փողոցից և ունի 108 ավտոկայանատեղի: Նկուղային հարկում տեղակայված են նաև անհրաժեշտ տեխնիկական սենյակներ, ջրի ռեզերվուարներ, պոմպակայան, էլեկտրական ենթակայան, հաշվիչների արկղերի և վահանակների սենյակներ: Տարածքի բարձրությունը տատանվում է 3.45 մ-ից մինչև 4.7 մ:

Շինության նկուղային հարկն, ըստ ՀՀՇՆ 21-04-014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի VIII. Հրդեհային մարում և փրկարարական աշխատանքներ գլխի 149-րդ կետի պահանջների, կահավորված են սանհանգույցներով, և նախատեսվում է կիրառել որպես թաքստոց-ապաստարան և բավարարում է բնակիչների քանակին:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Տարածքում նախատեսված է իրականացնել մանկական խաղահրապարակ՝ 109 քմ մակերեսով:

Բարեկարգման աշխատանքների շրջանակներում տարածքում նախատեսվում է իրականացնել ներբակային ճանապարհների, ճեմուղիների և սավաճքների կառուցում:

Նախագծման ընթացքում հաշվի է առնվել հաշմանդամների և սակավաշարժ խմբերի անխոչընդոտ շարժի կազմակերպման միջոցները, շինությունների մուտքային հանգույցներում առկա են թեքահարթակներ, իսկ շինության ներսում՝ վերելակներ:

Նախատեսվող շենքերի կոնստրուկտիվ համակարգը նախատեսված է 9 բալ սեյսմակայունության համար:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքերի կառուցման համար իրականացվել են ներքին էլեկտրամատակարարման, ջերմամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության համակարգերի ինժեներական լուծումները, որոնք իրականացվելու են ՀՀ շինարարական նորմերի համաձայն:

Բնակելի շենքերի գազամատակարարումը և էլեկտրամատակարարումը կիրականացվի՝ համաձայն տրվող տեխնիկական պայմանների:

Բնակելի շենքերի համար կենտրոնացված ջեռուցում չի նախատեսվում, յուրաքանչյուր բնակարան ջեռուցվելու լուրջ եղանակով:


Խմելու-կենցաղային սառը ջրի համակարգը կենտրոնացված է: Ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել տարածքում նախատեսվող արտեզյան խորքային հորից, որի համար ընկերությունը սահմանված կարգով կդիմի լիազոր մարմնին:

Շենքի կենցաղային կոյուղու հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվելու են արտաքին կոյուղու ցանց:

Քանի որ տարածքում բացակայում է կոյուղագիծը, նախատեսվում է կենցաղային կեղտաջրերի համար տեղադրել կենսաբանական մաքրման կայան:

Ընտրվել է «Դիամանտ 1125» տիպի ռուսական արտադրության կենսաբանական մաքրման կայան՝ 225մ³/օր արտադրողականությամբ, մաքրման աստիճանը 98 %:

Մաքրման կայանից դուրս եկող ջրի որոշակի քանակություն ռոռգման շրջանում կօգտագործվի կանաչապատ տարածքի ռոռգման համար, իսկ ավելցուկային մասը կուղղվի դեպի տարածքում նախատեսվող անջրթափանց սեպտիկ հոր: Ձմռան շրջանում մաքրման կայանից դուրս եկող ջուրն անբողբոխ կուղղվի դեպի անջրթափանց սեպտիկ հոր /225մ³ ծավալ/, որտեղից, ըստ անհրաժեշտության, պարբերաբար կտեղափոխվի հատուկ ծառայության միջոցով:



Բնակելի շենքերի համար նախատեսված է օդափոխության արհեստական համակարգ՝ ավտոկայանատեղիներից: Օդափոխության համար օգտագործվելու են կոմպակտ համակարգեր:

Ծխահեռացման օդամուղները տեղակայված են տանիքի վրա: Շենքում նախատեսված են ներածման և ծխի արտածման համակարգեր:

Նախատեսվող շինարարության աշխատանքների իրականացման ընդհանուր տևողությունը 36 ամիս է: Նախապատրաստական փուլում կատարվելու են հետևյալ աշխատանքները.

- շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում՝ հետիոտնային գլխածածկույթով,
- ժամանակավոր էլեկտրամատակարարում և ջրամատակարարում,
- շինարարական նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում,
- շինհրապարակի գիշերային լուսավորվածություն և այլն:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները կատարվելու են՝ պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները: Աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացվելու են օրվա ցերեկային ժամերին:

Հողային աշխատանքներից առաջացած հանույթի և գրունտի մի մասը նախատեսվում է օգտագործել հետլիցք և հարթեցում իրականացնելու նպատակով: Համաձայն նախնական հաշվարկների՝ հանվող հողային զանգվածի ծավալը կազմում է շուրջ 29624 խմ: Հետլիցքի նպատակով նախատեսվում է օգտագործել շուրջ 592 խմ հողային զանգվածը: Ավելացված գրունտը, որպես շինարարական աղբ, կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացվող վայր:

Ապրանքային բետոնը շինհրապարակ է բերվելու պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից:

Շինարարության ժամանակ օգտագործվելու են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսպատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (60 մարդ), որը կազմում է 2035.8 մ³/շին. ժամ. կամ 2.175 մ³/օր: 5118 մ³ ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 6909.3 մ³/շին. ժամ. կամ 15.35 մ³/օր:

Շինարարական աշխատանքներում և բանվորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը բերովի է:

Շինհրապարակում աշխատողների համար նախատեսվում է բիզոլուգարան՝ 4 հատ, որը մաքրվելու է այն սպասարկող ընկերության կողմից ըստ պահանջի: Շինհրապարակում նախատեսվում է նաև ժամանակավոր լուսարձակներ, հակահրդեհային վահանակներ, հանդերձարան՝ լվացարանով, անիվների լվացման հարթակ, բացօդյա պահեստ, թափոնների տարածք, գրասենյակ:

Համաձայն ՇՄԱԳ-ի՝ շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ ավտոկոմակ, բետոնատար ինքնաթափ, եռակցման սարք, շարժական կոմպրեսոր, էքսկավատոր և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ կենցաղային աղբ (0.7տ/տարի) և շինարարական աղբ (300 մ³), իսկ փորման աշխատանքների ընթացքում՝ վտանգավոր նյութերով աղտոտված հող՝ 29032 մ³ ծավալով և այլն: Բոլոր առաջացող թափոնների համար շինհրապարակում նախատեսված են

պահման հարթակներ, իսկ որոշ թափոնատեսակների համար նաև կոնտեյներներ: Շինարարական աղբը և հողն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը՝ մոտակա աղբավայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Տարածքը ոռոգվելու է ցնցուղային սարքավորումներով, որոնք միմյանց հետ կապվում են ստորգետնյա պոլիէթիլենային խողովակներով:

Կանաչապատման աշխատանքների իրականացման համար համայնքապետարանի հետ համաձայնեցված նախատեսվում է ձեռք բերել մոտ 1300 մ³ բուսահող:

Տարածքում նախատեսվում է տնկել՝ Թխկի սրտատերև կարմիր - 14 հատ, Գնդաձև իլենի - 8 հատ, Գնդաձև թույա - 6 հատ, Սակուռա - 5 հատ, Բարբարիս - 7 հատ, Ասպիրակ - 8 հատ, Ֆորգիցիա - 9 հատ, Խենոմելիս - 11 հատ, Սամշիտ - 119 գժմ, Եղևնի կովկասյան - 5 հատ, Թզուկ վարդեր - 138 մ², Սիզամարգ - 2408.1 մ²:

Նախատեսվող գործունեության ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի ու մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանմանը, դրանց արդյունավետ օգտագործմանը, թափոնների կառավարմանը, աղմուկի մակարդակի ու արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով ջրցանի կատարում՝ օրական 2 անգամ,

- աղմկահարույց աշխատանքների իրականացումը հնարավորինս օրվա ցերեկային ժամերին,

- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,

- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,

- հեղուկ նյութերի պահումը հատուկ տակդիրների վրա՝ շրջակա միջավայր հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- վտանգավոր արտահոսքերի դեպքում անմիջապես կլանիչ նյութերով մաքրում,

- մեքենաների և տեխնիկայի վլացումը շինհրապարակից դուրս՝ համայնքում գործող մասնագիտացված կետերում,

- տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում,

- բոլոր մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,

- քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատումը շինհրապարակում,

- տնկված ծառերի և խոտածածկի խնամք և մոնիթորինգ,

- մթնոլորտային օդ արտանետումների (մոռի CO, NOx և այլն) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ արվելու ամիսը մեկ անգամ,



- օգտագործված յուղերով ու քսայուղերով հողերը հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- շինարարության ընթացքում համայնքային ասֆալտապատ ճանապարհների վնասման դեպքում՝ դրանց անմիջապես վերանորոգում,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների կանոնների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվել է շուրջ 1190 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ.

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան:

Գնահատման արդյունքում վերլուծվել են հնարավոր անցանկալի բնապահպանական ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների և բնակչության առողջության ու սոցիալ-տնտեսական պայմանների վրա, մշակվել են ազդեցությունների նվազեցման և կանխարգելման հիմնական ուղղությունները:

Շրջակա միջավայրի վրա բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, Ջրվեժի համայնքապետարանը, Ձորաղբյուր բնակավայրի շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով, գնահատման և փորձաքննության ընթացքում Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

- Նախատեսվող շինարարական աշխատանքները կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ջրվեժի համայնքապետարանի հետ համաձայնեցված:



- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝ առաջնորդվել ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:

- Ապահովել ՇՄԱԳ-ում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Միդիս քնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Զրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի 2-րդ թաղամաս 10 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է փորձաքննական դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Արմինե Վարդանյան